

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

Մեծ. Պարոն դոկտոր Մ. Բ. Իւթիւճեան անցեալ 1882 թուի Յուլիս ամսից սկսած պարբերաբար իւրաքանչիւր ամիս հրատարակումէ . Մատենադարան ժողովրդեան , վերնագրով առողջապահական գրքոյկը , որ իւր բովանդակութեամբ և դիւրահասկանալի ոճովը մեծ բաւականութիւն է պատճառում ընթերցողներին :

Յանկալի էր որ հայ հասարակութիւնը ուշ դարձնէր յիշեալ հրատարակութեան վերայ և այդ օգտաւէտ ձեռնարկութեան յաջողութեան համար ըստ իւրովսանն կարեաց նպաստէր՝ բաժանորդ գրուելով . Հրատարակութեան պայմանները կը հրատարակենք յայտարարութիւններէ կարգում : Յանկացողները կարող են դիմել կամ ուղղակի հեղինակին կամ խմբագրութեանս , որ ժամանակաւորապէս յանձն է առնում յիշեալ հրատարակութեան գործակալութիւնը Ս. Էջմիածնում և Վաղարշապատում :

* *

Հնորհակալութեամբ ստացանք Մեծ. Պ. Գրիգոր Խալաթեանի « Դաշար Փարպեցի և գործք նորին , պատմական և գրական քննութիւն » վերնագրով հրատարակութիւնը : Տիպը և թուղթը ընտիր են , ծանօթութիւնները գրուած են գրաւար լեզուով և այնպիսի ոճով՝ որ յատուկ է Մոսկվայի բանասէրներին : Գրքի գինն է 1 ռուբլի 50 կոպէկ (կամ 5 ֆրանկ) , Հրատարակչի հասցէն է Москва, Арианский переул. домъ Грачева.

Երիտասարդ հրատարակչին յաջողութիւն և աւելի փայլուն ապագայ ենք ցանկանում հայ գրական ասպարիզում :

* *

Խմբագրին հասցնելու համար ուղարկուած գրքոյկը « Կաթուղիկոսի ընտրութիւնը , խորհրդածութիւն և բաղձանք մի քահանայի » շնորհակալութեամբ ստացանք : Գիրքը տպուած է Մոսկվայում . գինն է 25 կ. թուղթը և տիպը ընտիր են , սակայն տպագրութիւնը լի է տպագրական սխալներով : Այդ տեսակ սխալները մեծ շփոթութիւն են առաջացնում մանաւանդ պատմական գրուածոց ժամանակագրութեանց մէջ :

Գիրքը բաժանուած է եօթն գլուխ , Եկեղեցու վիճակի վերայ ընդհանրապէս խօսելով՝ Արժ. հեղինակը իւր երկը վերջացրել է վերնագրին պատշաճեալ խորհրդածութեամբ : Բացի եօթն գլուխներից , կայ և մի յաւելուած , վերաբերեալ Երուսաղէմայ ու Կ. Պօլսոյ Պատրիարքների , Սոսի և Աղթամարի մասնաւոր կաթուղիկոսութեանց ու բոլոր զանազարգերի պարտականութեան՝ և Ս. Էջմիածնի ընդհանրական կաթուղիկոսի հետ ունենալիք յարաբերութեանը :

Տա՛ր Աստուած որ հեղինակի բաղձանքը կատարուէր, և Լուսաւորչի Աթոռը գահակալելու համար ընտրուելիք անձը կարողանար արդարացրնել այն բոլոր բարի բաղձանքները, որ ամեն հայ ունի և սպասումէ հասնել իւր հօտապետի արգարասէր, ժողովրդասէր, եկեղեցասէր, ժիր և գործունեայ բնաւորութեամբ:

* * *

Ատացուած լինելով Ղզլարու փոխանորդ Արժ. Ադամ վարդապետի յանուն Սինօղի Մայիսի 10 ին Ք 16 յայտարարութեամբ ի նպաստ Ս. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանի Պ. Յովհաննէս Եսայեանցի ի յիշատակ իւր հանգուցեալ Մարգարիտ կնոջ նուիրած մի հարիւր ռուբլի,— Ս. Սինօղի իւր Ք 2281 հրամանաւ պատուիրում է հրատարակել ի գիտութիւն:

Ատարելով Ս. Սինօղի պատուէրը, խմբագրութիւնս բարեմաղթումէ հանգիստ և երկնից Ս. արքայութիւն հանգուցեալ տիկնոջ. իսկ նորա սգազգեաց առն՝ Ս. հոգւով մխիթարութիւն և բաղդաւորութիւն:

* * *

Աստրախանայ Մելքիսեդէկ քահանայ Քալանթարեանցը հաղորդումէ խմբագրութեանս որ յօգուտ Ս. Էջմիածնի Հոգ. Ճեմարանի հաւաքած լինելով 60 ռուբլի հետեւալ անձիքներից, Յունիսի 20 ին ուղարկել է Ս. Սինօղին:

Նուիրատու պարոններն են

Նորին գերազանցութիւն Մկրտում Դանիէլեան 25 ռուբլի:

Աստիճանաւոր Դանիէլ Մկրտումեան Սարգսեանց 25 ռուբլի:

Աստիճանաւոր Դրիգոր Մկրտումեան Սարգսեանց 10 ռուբլի:

Խմբագրութիւնս հրատարակելով ի միամտութիւն նուիրատու պարոններին,— Ս. Էջմիածնի վարչութեան կողմից յայտնումէ յիշեալ բարեսէր պարոններին իւր խորին շնորհակալութիւնը:

* * *

Պատահաբար գտնուելով Իգգիրում, բաղդ ունեցայտեսնել Իգգիրմաւայի ծխատէր հանգուցեալ Սարգիս աւագ քահանայ Մանուկեանի կրտակը, որ ի միջի այլոց Իգգիրու երկսեռ հոգեւոր զպրօցներին կրտակել է մի բաւական ընդարձակ գետին՝ շրջապատած բարդի ծառերով: այդ ընդարձակ գետին եկամուտը մօտաւորապէս տարին 200 ռուբլի կարելի է հաշուել: Ատակի՝ զպրօցներին պատկանեալ յօգուածն է հետեւեալը. « Է. իմ սեպհական այգիների տասն սոմարից բաղկացեալ մեծ կտորը, որ գտնվում է Արհաջի և Իգգիրմաւու գիւղերի առուակների միջոցում, և նա ունի մասնաւոր պարիսպ և հազարի չափ միջումը տնկված բարդի մեծացած ծառեր արժողութեամբ 300 ռուբլւոյ, և այդ թողնումեմ մշտնջենաւոր յիշատակ հոգւոյ իմոյ Իգգիրի երկսեռ զըպրօցաց, որոյ արդիւնքով Իգգիրմաւայից տասն որդեգիր ուսանողք աղքատ դասակարգից ձրի ուսանին:

Այս կտակը հաստատուած է Երեւանայ Նահանգական գատարանում 8-ն ներկայ Յուլիսի տարւոյս:

Հանգիստ և երկնից սուրբ արքայութիւն ենք բարեմաղթում յիշեալ հանգուցեալ քահանային, որ իւր ունեցածից չէ խնայել բաժին հանել ազգի աղքատիկ զաւակաց, յատկապէս ընտրելով իւր ծխականները իւր արած բարեացը հաղորդ գտնուելու:

* * *

Որչափ մեզ առիթ եղաւ պատահել Սուրմալուի և Սարգարապատի գաւառականների եկեղեցիներում, նկատելի է ընդհանուր անմաքրութիւն և անբարեկարգութիւն, եկեղեցական զգեստներն ու անօթները բեմի վերայ կամ սեղանի ետեւ վայրի վերոյ թափուած են. անհարազատ ձեռքեր յաճախ շօշափում են այդ գոյքերը յօգուտ անձին և ի վնաս եկեղեցու: Գործակալների ուշադրութիւնն ենք հրաւիրում այս հանգամանքի վերայ, յայտնելով միանգամայն որ, հոգ տանէին իւրաքանչիւր եկեղեցու զարդ և անօթեղէնքը մի քանի պատուաւոր կամ հասարակութիւնից ընտրուած անձանց ներկայութեամբ վերաստուգել արձանագրութեան ժապաւինեալ մատենի հետ, այդ զարդերից ու անօթներից սովորական գործածելիքը ցուցակաւ յանձնելով տեղւոյն քահանային կամ ում որ պատշաճ կը դատուի, մնացեալները զետեղէին սնդուկների կամ պահարանների մէջ, բանալին յանձնէին Երեսփոխին՝ իբրեւ հասարակութիւնից ընտրուած երաշխաւորեալ անձին: Իսկ այդ սնդուկները կամ պահարանները եկեղեցու աւանդատանը պահէին՝ կամ մի այլ յարմար տեղ. բայց ոչ բնաւ բեմի վերայ կամ սեղանի ետեւ: Սովորական զարդ և անօթեղէնքը նոյնպէս պէտք է աւանդատանը (խորան) պահել:

* * *

Ահա երկու տարի է, որ Սուրմալուի հասարակութիւնը տաքնապի մէջ է մի գիշակեր գազանի երեսից, որ գիշերով յափշտակում է երեսաներ և գիշատում: Գիշատուածների մէջ պատահել են նաեւ 10—12 տարեկաններ էլ, Երկիւղը մօտեւանդ լոյսնեակ չեղած գիշերներին է, Ժողովուրդը ի միջի այլ և այլ զգուշութեանց, կտուրներին տնկել է մարդաձեւ հագցրած կեղծիք գազանին վախացնելու համար: Զրոյցները այդ մասին անհամար և բաղմատեսակ են, կարծում են որ գիշակեր կենդանին բոքների լինի:

* * *

Հանգուցեալ Տ. Գէորգ Գ. կաթուղիկոսի մահից յետոյ Կ. Պօլսոյ մամուլը զրազուել է միայն Ս. Էջմիածնի միաբանական ուխտիս անդամոց մասին այն տեսակ լուրեր հրատարակելով, որոնք թէ հրատարակողին և թէ թելադրողին ամօթ են վերաբերում:

Տ. Գէորգ Գ. վախճանելով մի՞թէ պէտք է կարծել որ Էջմիածնում մեռաւ և բոլոր մարդավայել վարմանց նախանձախնդրութիւնը մի՞թէ պէտք է կարծել՝ որ Էջմիածնի միաբանութիւնը այնքան անոր աստիճա-

նի մէջ է, որ չի կարողանում իւր պատիւը պահպանելու համար հոգալ և մտածել, Ենթադրենք թէ առանց խղճահարուելու կարելի է ամենայն անամօթ ցոփաբանութիւն ստեղծել և հրատարակել հոգեորականութեան վերաբերութեամբ. բայց չէ՞ որ այդ հոգեորականութիւն կազմողները մարդիկ են, և աշխարհիս երեսին չը կայ մի մարդ՝ որ պատուոյ զգացում չունենայ. Ա. եր առնել և մի ամբողջ միաբանութեան մարդկային պատուոյ հետ խաղալ, եթէ ոչ աւելի՝ կատարեալ անխղճութիւն է:

Գեր. Տ. Ա. հարամ սրբազան եպիսկոպոս Մանկունի Արձագանքի 16 համարում տպած իւր նամակը վերջացնումէ հետեւեալ խօսքերով. «Իսկ եթէ ձեր յիշած գրութիւնքը գրողը պ. Թիւլպէնտճեանցն է՝ թէ ա՛յլք, ինձ գիտենալոյ պէտք չը կայ, մանաւանդ ո՞ր մէկը փնդոսս և գտնես՝ երբ ներկայումս հազիւ ստորագրութիւնը դնել գիտցող պատանեակն անգամ յօդուածագիր, գիտողագիր, հայհոյագիր և այլն դարձած է և ամեն տեղ կը գտնուի մանաւանդ աստ Ա. Էջմիածնում և գիւղում»: Մենք մեզ չենք ներում հաւատալ թէ վերոյիշեալ տողերը գրող Գեր. Ա. հարամ եպիսկոպոսը լինի թիւլաղրողը յիշեալ անամօթ ցոփութեանց թղթակցութեամբ կամ առանձին նամակներով՝ միջնորդների միջոցաւ, որովհետեւ մենք կաթուղիկոսի խորհրդական քարտուղարից աւելի բանականութիւն և մարդավարութիւն էինք և ենք սպասում. մանաւանդ այն հանգամանքն ևս աչքի առաջ ունենալով՝ որ զրպարտեալները մեծ մասամբ Հանգուցեալ Կաթուղիկոսի օրով և Ա. հարամ եպիսկոպոսի խորհրդով են դիրք և բարձր պաշտօն ստացել. ի հարկէ Հանգուցեալ Կաթուղիկոսը և Ա. հարամ սրբազանը ճանաչումէին դոցա:

Յիշեալ անամօթ զրպարտութիւնները. Վ. Պօլսոյ մամուլի մէջ եթէ դեռ շարունակուեն՝ այն ժամանակ խմբագրութիւնս պարտք անձին կը համարի պատճառները փնդուելու համար Ս. Էջմիածնի գործողութեանց վերջին 16 ամեակի գործերը թերթել:

Էջմիածնի միաբանութիւնը գիտէ յարգել իւր Հայրապետի յիշատակը և չը նայելով որ ահագին տարաձայնութիւններ եղան Հանգուցեալ Տ. Գէորգ Դ. կաթուղիկոսի անձնական գանձանակի դատարկ լինելուն պատճառով. սակայն և Էջմիածնի վարչութիւնը պատուելով իւր Հայրապետի յիշատակը, չը կամենալով նորին Օծութեան քրոջը մուրացիկ դրութեան մէջ թողնել. բարեհաճեց տալ նորան հանգուցեալ Հայրապետի դրամական գոյից այն վերջին մնացորդը՝ որ որպէս թէ հանգուցեալ Հայրապետը բերանացի կտակած է եղել իւր քրոջը. — Յայտնի է որ յիշեալ տիկինը ոչ մի իրաւունք չունէր ստանալու այդ դրամը, ոչ եկեղեցական և ոչ տէրութենական օրէնքներով՝ որ սահմանել է կուսակրօն հոգեորականաց գոյքը թողուլ ի ժառանգութիւն այն վանքերի՝ որոնց կրօնաւոր են, եթէ հոգեորականք նախապէս մի որ և է բարեգործական հաստատութեան անունով կտակ չեն արել. սակայն Էջմիածնի վարչութիւնը յարգելով իւր Հայրապետի յիշատակը մարդասիրական զգաց-

մամբ կամեցաւ սփռիլ իւր Հայրապետի քրոջը՝ իսկ այդ քոյրը հակառակ մարդկային զգացման օրինաց, և ոչ մի «Հոգեոց» ասել տուեց իւր եղբոր գերեզմանի վերայ։ Այս ամենը լինելուց յետոյ, գեռ կան մարդիկ, որոնք երես ունին խօսելու, և այն էլ իրանցից շատ և շատ բարեմասնութեամբ գերազանց մարդկանց վերայ, թէ Կ. Պօլսոյ լրագրոններում տեղի գտած շաղկապիտութեանց թերագիրն հակառակ արձագանքի № 16 համարում տպած իւր նամակին՝ ինքն—Գեր. Ահհրամ սրբազանն է այն ժամանակ միայն հետեւեալ խօսքերը կը մնայ մեզ ասել։— Էջմիածնի միաբանութիւնը սպասուէր սրբազանից աւելի բանականութեան և երախտագիտութեան զգացման դէպ ի իւր հոգեոց պէս սիրած միաբանութիւնն ու վարչութիւնը, որ գեռ տանում է նորան . . . :

Կ. Պօլսում հրատարակուող ^{***}Հայրենիք թերթի մէջ ըստ յանձնարարութեան թերթի խմբագրին Պ. Թաշճեանի մի յօդուածը կարդացինք։ Յարգելի պարոնը լսելով թէ Էջմիածնի Սինօդը որոշել է Սահակ սարկաւազին ուղարկել Երնջակու վանքը Յովբեանց Գեր. Տէր Գրիգոր սրբազան Արքեպիսկոպոսի մօտ՝ Շարականը և հոգևոր երգերը Էջմիածնի հին եղանակով ձայնագրելու համար, յարձակվում է Սինօդի վերայ, համարելով այդ բանը իբրև մի ատելութեան ցոյց դէպ ի յիշատակը Հանգուցեալ Հայրապետի, որի օրով իւր Զայնագրեալ շարականն ու այլ հոգևոր երգերը համարելով Ս. Սահակի և Մեսրօպի հոգեշունչ եղանակների ճիշտ կրկնութիւնը, Էջմիածնի և ռուսահայոցս եղանակները համարում է ռուսական, պարսկական և այլ եղանակաց աղջատմունք։

Ցանկալի է իմանալ թէ, պ. Թաշճեանը ինչ ապացոյցներ ունի իւր Զայնագրեալ երգոց թարգմանչաց հոգեշունչ եղանակ լինելուն, իսկ Էջմիածնի երգերին՝ ռուսական և պարսկական եղանակաց աղջատմունք համարելուն։ Թէև Սինօդը գեռ պղպիսի մի տնօրէնութիւն չէր արել, սակայն եթէ անէ էլ, ով է տուել իրաւունք պ. Թաշճեանին առաւել քան իւր չափը խնդիրների մէջ մտնելու։

Ե՞րբ մարդիկ իրանց չափը կը ճանաչեն։

Մի ժամանակ Էջմիածնի միաբաններն էին կառավարում տաճկահայոց շատ թեմերը և պատրիարքական Աթոռը, և Էջմիածինն էր համարվում եկեղեցական երգեցողութեան և կարգաց միակ աւանդապահը։ Իսկ այժմ՝ այն դրութեանն է ենթադրվում, որ ն. Թաշճեանի պէս մարդկանց հրահանգութեան պէտք է կարօտի։ Հայոց ազգի աչքը լոյս։

Մասիս լրագրի Մայիս 18 թերթի մէջ ^{***}հրատարակուած են «Էջմիածնէն հաղորդուած տեղեկութիւնք» վերնագրով մի շարք լուրեր։ այդ տեղեկութեանց մէջ ի միջի այլոց տեղեկատուն յայտնում է որ Սինօդը Տաճարի վերայ ինչ ինչ շինուածական մեծածախ նորոգութիւններ ձեռնարկած լինելով՝ Ալէքսանդրապոլից մի յատուկ ճարտարապետ բն-

րել է տուել. և յարձակվումէ Սինօգի վերայ ասելով որ Սինօգը փոխանակ մի քանի տասնեակ հազար ռուբլի ապառիկները հաւաքելու. — գործը երեսի վերայ թողած՝ գանձարանի պատրաստ գրամներից սկսել է ծախսել, եզրակացնելով. «անշուտ սա համադմամբ ու հաշուով որ՝ և թէ Գէորգ Աթուղիկոս կրցաւ Էջմիածնի գատարկ գանձարանը 335,000 ռուբլի հարստութեամբ մ' օժտել հարկաւ նորա յաջորդն ալ կրնայ նոյն բանն ընել իրենց այժմու գատարկել սկսած գանձարանը լեցնելու համար. Երաւ է Ս. Սինօգի որոշմամբ մայր տաճարի մէջ ուխտաւորների վառած մոմերի սեւացած տեղերը պատերի և սիւնների վերայ և խոնաւութիւնից ու հնութիւնից տգեղացած ծեփերը լնկնելու ծախքով փոխուեցին և անկարելի էր զանց անել այդ բանը, որ ամօթ և անպատուութիւն էր բերում օտար այցելուների առաջ, Հիմա Ս. Սինօգը որոշել է դարձեալ գանձարանի գրամներով զեռ իւր գոյութեան տասնամեակը չըլրացրած ճեմարանի ու իւր գոյութեան քառամեակը չըլրացրած ննջարանի խախտած տեղերը վերանորոգել մօտալուտ վերանորոգի առաջը առնելու համար, Յանկալի էր իմանալ թէ արդեօք լրատուն այդ բանի համար էլ կասէր որ յետաձգելու է մինչև նոր Աթուղիկոսի ընտրութիւնը, Լրատուն գիտէ որ արդէն հանգուցեալ Աթուղիկոսի կենդանութեան ժամանակ վանքի ծախքերը հոգալու համար գանձարանի պատրաստի գրամներից էր գործադրվում հարկաւոր գրամը:

Արդէն լրատուն գիտէ որ Էջմիածնի գանձարանը բոլորովին գատարկ չէր Հանգ. Տ. Գէորգ Գ. Աթուղիկոսի Էջմիածին մուտք գործելիս, Արդէն լրատուն գիտէ որ մի քանի տասնեակ հազար ռուբլի ապառիկների համար Ս. Սինօգը հանգ. Աթուղիկոսի մահից յետոյ միայն համարձակուեց ուշադրութիւն դարձնել, Արդէն լրատուն գիտէ որ այդ ապառիկների գործը նոր չէ, այլ սկսուած է գրեթէ 1868 թուից և, այնպէս խճճուած մի գործ է, որ զիւրեաւ չի կարող գլուխ դալ, Լրատուն շատ բան գիտէ. սակայն բեր ազնուութիւն, որ մարդ իւր ամեն գիտեցածը խոստովանի:

* * *

Շամախու թեմի Գեօշայ գաւառի Աւալաշայ դիւղի հոգեւոր ծխական գպրոցի հոգաբարձու Պ. Բալասի տէր Գասպարեանի՝ խմբագրութեանս ուղղած նամակից երևումէ որ, տեղւոյն ներսէս Ա. քահ. Տ. Մարկոսեանի շնորհիւ 1872 թուին եկեղեցւոյն կից շինուել է տեղւոյն ուսումնարանը քաղկացած երկու՝ քար ու կրից շինուած սենեակներից, Գրգրոցի մօտից գումարն է 370 ռուբլի. որ գոյանումէ հետեւեալ աղբիւրներից՝ Աւալաշայ գիւղից՝ 150 ռուբ, Ուշալ՝ 50 ռուբ, Նորաշէն՝ 50 ռուբ, Բողաւանդ՝ 20 ռուբ, եկեղեցական գրամի տոկոս՝ 100 ռուբլիներից:

Ծախուց գումարն է 310 ռուբլի — ըստ այսմ 300 ռուբ. ուսուցչին, 10 ռուբ. «Մշակ» լրագրին, 60 ռուբլի մնումէ յաւելեալ գրամ, Գրգր-

բոցում՝ եղել են 62 աշակերտ, ուսուցիչն է Պ. Վարապետ տէր Յակովբեան Մեհրաբեանց, Դասական առարկաներն են՝ ծխական դպրոցներին յատկացեալները, Հոգաբարձու պարոն լրատուն գումումէ ուսուցչի ջանքը և շնորհակալութիւն է յայտնում, Տար Աստուած որ մեր զըպրոցների բոլոր վարժապետներն էլ սրբութեամբ կատարէին իրանց ըստանձնած պարտքը՝ իսկ հոգաբարձուքը՝ առանց կանխակալ ենթադրութեանց զնահատէին ուսումնարանների անհրաժեշտութեան կարիքն ու ուսուցիչների ջանքը և խաղալիք չը դարձնէին իրանց կրքերին:

* *

Արարատ ամսագիրը ուղարկվում է տաճկաստանի խմբագրներին, ըստ օրինի, դրա պէտք է իրանց թերթով փոխանակէին. թող որ յիշեալ պարոնները զխանումն այդ փոխանակութիւնը, Էջմիածին ուղարկուելիք թերթերից մի քանիսի անունով շուտ՝ իւր ժամանակին և կանոնաւոր կերպով են ուղարկում, իսկ մնացեալներինը՝ որպիսի է Սինօգի անուան ուղարկուածը շատ ուշ և անկանոն կերպով է ստացվում:

Այս հանգամանքի վերայ խմբագրութիւնս խնդրում է ուշ դարձնել:

* *

Յատնի է որ մինչև վերջին ժամանակներս Ռուս աղանդաւորները զրկուած էին շատ քաղաքական և հոգեւոր իրաւունքներից, Այժմ՝ լրագրներից երևում է, որ Պետական խորհուրդը ներքին գործոց նախարարի մի յայտարարութեան վերայ պատշաճ է համարել աղանդաւորներին հետեւեալ իրաւունքները տալ.

ա. Բացի Սօսլեցներից, բոլոր աղանդաւորներին պէտք է տրուի ընդհանուր հիմունքի վերայ անցագիր, որով կարող են Ռուսիոյ խորքերը մուտ գործել:

բ. Բոլոր աղանդաւորներին տրվում է վաճառականութեամբ և ամենայն տեսակ արուեստներով պարապելու իրաւունք:

գ. Տրվում է իրաւունք մասնակցելու հասարակական գործերին, Այն տեղերում, ուր աղանդաւորները ուղղափառների հետ միասին են բնակում, եթէ ստարչինան (գիւղաւագ) աղանդաւոր է, օգնականը պէտք է անպատճառ յունադաւան լինի, Միայն աղանդաւոր ստարչինաները և նոցա օգնականները իրաւունք չունեն ծխական հոգաբարձութեանց մասնակցելու:

դ. Իրաւունք է տրվում հասարակական աղօթքներ կատարելու հոգեւոր պիտոյքներին լրումն տալու համար, և ինչպէս մասնաւոր տներում այնպէս էլ դորա համար առանձին նշանակուած շինութիւններում, նոցա ծէսերին համեմատ ժամ ասելու միայն այն անհրաժեշտ պայմանով՝ որ այդ միջոցին չը գործուին այնպիսի ձևեր, որոնք հակառակ լինէին վայելչութեան և հասարակութեան խաղաղութեանը:

ե. Նոցա տրվում է իրաւունք ուղղելու և վերանորոգելու իւրեանց պատկանող մատուռները և այլ աղօթատեղիները — միայն այն պայմա-

նով, որ չփոխեն հին ձևը, Բայց նախ քան զրանց ձեռնարկելը պետք է կանխապես թղլտվութիւն խնդրեն նահանգապետից կամ տեղական գլխաւորից (նաչայրնիկ)։

Ե. Աղօթատեղիների բացումը պետք է ներքին գործոց նախարարի թղլտվութեամբ լինի, և այն էլ այն պայմանով, որ բացումը հանդիսաւոր ձև չունենայ, Իսկ վանքերի և անապատների (ճգնարան) բացումը արգելվում է։

Է. Այնպիսի տեղերում, ուր ժողովրդեան մեծամասնութիւնը աղանդաւորներն են և աղօթատուն չունին ներքին գործոց նախարարի թղլտվութեամբ եղած շինութիւններից մինը կարելի է աղօթատան փոխել, միայն պէտք է նայել, որպէս զի շինութիւնը արտաքին ձևով նման էր լինի յունադաւանների եկեղեցուն. դրսի զանգակ—արգելվում է։

Ը. Մեռելաթաղի ժամանակ թղլտարվում է ա. դագաղի առաջից պատկեր տանել, և բ. գերեզմանի վերայ մաղթանքներ կատարել, և քանի որ հանդերձ, միայն առանց զգեստաւորութեան։

Բ. Նոցա առաջնորդները, ղեկավարները և այլ նոցա՝ կրօնական արարողութիւններ կատարողները այս վերոյիշեալ պատճառներով պատժի չեն ենթարկվում, բացի այն դէպքերից, երբ նոքա կրմեղագրուն իրանց աղանդը յունադաւանների մէջ քարոզելում և այլ յանցանքների կատարելում, Վերոյիշեալ անձինք հոգեւոր աստիճանաւոր չեն համարվում, այլ դասվում են ուղղակի այն կարգին, ինչ ծագում որ ունենան առաջ։

Գ. Աղանդաւորներին արգելվում է, ա. զգեստաւորուած թափօր և հրապարակական ծիսակատարութիւն, Բ. հրապարակական գործածութիւն պատկերների. (բացի Ը յօդուածի — դիպուածից), Գ. տնից, աղօթատնից և այլ շինութիւններից դուրս ոչ զգեստաւորուել և ոչ էլ հոգեւորական շոր կրել, Դ. աղանդաւորական երգեցողութիւններ փողոցներում և հրապարակներում։

Ժ. Ժ. Զ. և Է. յօդուածներին համեմատ երբ ներքին գործոց նախարարը վճիռ է կայացնում, այդ միջոցին, նա յարմարվում է ինչպէս տեղական հանգամանքներին, այնպէս և աղանդի վարդապետութեան բնաւորութեանը և իւրաքանչիւրի առանձին պայմանների հետ։

Նորին Կայսերական Մեծութիւնը այս արտօնութիւնները բարեհաճեց հաստատել և հրամայեց իրագործել Մայիսի 3 ին։

* * *

«Արեւելեան մամուլը» իւր Մայիս ամսատետրակի տեղական լուրերի կարգում յայտնում է որ, միամեայ կամովին դադարումից յետոյ, պէտք է շարաթը երկու անգամ հրատարակուի «Արշալոյս Արարատեան» երիցազոյն լրագիրը, Այս օրերս ստացանք յիշեալ լրագրի Յուլիս 7 թերթը. արտօնատէրն է Պ. Ղ. Գ. Պալթազարեան, իսկ համարատու՝ իւրմբագիրն է Պ. Յ. Կ. Սվաճեան, Բաժանորդագրութիւնն է օտար երկրների

Համար 25 ֆրանք կանխիկ, փոստայի ծախքը խմբագրութիւնն է վճարում. բաժանորդագրութեան և ծանուցման համար պէտք է դիմել Զմիւռնիա. առ Պ. Խ. Դերձակեան, Եօլ—Պէտէսմէն № 5,

Արձագանքի 29 համարում արտատպուած է Արարատի Յգնիս ամ-
սատետրակի Այլ Լ - յւրից Կ. Պօլսոյ, Կաթուղիկոսական հարցի առթիւ
կազմուած, յանձնաժողովին վերաբերեալ կտորը՝ Պ. Ն. — Տ. — Ա. -ի
խորհրդածութեամբ:

Պ. Ն. — Տ. — Ղ. — Ի կարծիքով յիշեալ լուրը Սինօդի պաշտօնական հրատարակութիւն է, — Իրաւ է, Լրարատը Ս. Էջմիածնում հրատարակուելով համարվումէ պաշտօնական ամսագիր, բայց նորա բոլոր մասերն էլ պաշտօնական չեն, պաշտօնական բաժինը առանձին է իւր յատուկ վերնագրով:

Գալով,—բողոքին էլ ցանկալի է իմանալ թե մեր Վ. Պօլսոյ և ընդհանրապէս արտասահմանեան ազգայինք ինչ տրամադրութիւն ունին Վաթուղիկոսական խնդրի վերաբերութեամբ՝ և ինչ պատրաստութիւններ են տեսնվում. նոյն ցանկութիւնն ունի և Ս. Էջմիածնի միաբանութիւնը:

Ս. Էջմիածնի միաբանութիւնը չի կարող նախապէս առաջարկել ընտրելի որ՝ զանազան պատճառներով, Պ. Ն. — Տ. — Ա. -ին և այլոց յայտնի պէտք է լինին պատճառները թէ՛ ինչո՞ւ Էջմիածինը լռութիւն է պահում Կաթողիկոսի ընտրութեան առիթով, Նոյն լռութիւնը յարգուած կը մնայ. իսկ պօլսթեֆնայի հաստատութիւնից յետոյ եղած ընտրութիւնների մանրամասնութիւնը իբրեւ ըանասիրական յօգուած խմբագրութիւնս մտադիր է հետ զհետէ հրատարակել « Էջմիածնի արխիւ » վերնագրով, որին ի հարկէ ոչինչ պաշտօնական յատկութիւն պէտք չէ վերագրել:

Պ. Ն. — Տ. — Ա. Իւր խորհրդածութեան մէջ Արարատից վեր առած կտորը հարազատութեամբ շէ արտագրել իսկականն է, — իսկ եթէ մասնաժողովի եզրակացութեանց տեղեակ լինելու բաղդը միայն վերապահութեամբ կը լինի մասնաժողով կազմող անդամոց՝ իրրեւ առանձնաշնորհութիւն, այն ժամանկ իբրեւնէն քանակէն եւ ինքնութեւն այդ մասնաժողովի քննարկութեան մասին՝ որ սկսեց մի քանի օրէնք մը յանձնարել ինքնաշնորհութեան, որով Պ. Ստեփան Գրիգորեան հրապարակեց մասնաժողովին ժողովներէն։


Պ. Ն. — Տ. — Ղ. յիշեալ կտորը այսպէս է առնում իւր խորհրդածութեան մէջ, «Այն ժամանակ, ասումէ Արարատը, ազգը կարող է նոյն թերահաւատութեամբ վերաբերուիլ զէպի նա, ինչպէս արեց Պ. Ստեփան Փափաղեանցը»։ Տարբերութիւնն ակներև է։

Իսկականի եղբայացութիւնն է որ յանձնաժողովի որոշմանց ծածուկ
մնալով ուրիշները կարող են կատարածել, և թէ, Դ. Ստեփան Փափա-

զեան մասնաժողով կազմող անդամոց մէջ դժտութիւն պատահելուն համար հրաժարուել է մասնակցելու ժողովին: Իսկ Պ. Ն.—Տ.—Ղ. ի առջ Բերածի եղբակացութեամբ գուրս է գալիս որ, ազգը հետեւելով Պ. Ստեփան Փափաղեանին կարող է թերահաւատութեամբ վերաբերուիլ զէպի Նա (Յանձնաժողովը):

Բնական է որ Ստեփան Փափաղեան պնդան հեղինակութիւն չի կարող ունենալ՝ որ ազգը հետեւի նորան անպայման կերպով: սակայն անբնականն այն է որ իսկականի «ուրիշներն էլ» բառը Պ. Ն.—Տ.—Ղ. փոխել է «ազգ»:

Յուսով ենք թէ սորանով վերջին խօսքը ասած կը լինինք Պ. Ն.—Տ.—Ղ. ին և առիթ չի լինիլ պոստհետեւ այս մասին երկարել երկուստեք:



ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

(ՍԵՆՕԳԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ԲԵՂԱՌԱԾՔ.)

ՎԱՐՉԱԿԱՆՔ.

17^ն Յունիսի. Սինօղը Արարտա ամսագրի խմբագիր կարգեց Արժ. Յուսիկ Վարդապետին, իսկ Տպարանական ժողովի անդամ՝ Արժ. Արիստակէս Վարդապետին, յատկացնելով վերջնոյս Տպարանի ծախուց և ծառայից վերահսկողի պաշտօնը:

24^ն Յունիսի. Սինօղը ի տեղի իւր հրաժարականով Մայր Աթոռոյս ծախսարարութեան պաշտօնից արձակուած Արժ. Սարգիս Վարդապետի Տէր Գասպարեան՝ ծախսարար կարգեց Սինօղի անդամ Գեոր. Տ. Յովակիմ Եպիսկոպոս Տէր Գրիգորեանին:

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆՔ.

1^ն Յունիսի. Սինօղը ի նկատի ունելով նոր-Բայազէտու ծխատէր և երբեմն համանուն զաւառի գործակալ Բաղէոս քահանայի ապօրինի արարմանց համար կատարուած քննութիւնը, որոշեց հսկողութեամբ տեղական գործակալի ենթարկել նորան պատժի՝ մի ամսեայ ժամանակով առանց փիլօնի եկեղեցու դրանը ապաշխարել տալով:



17^ն յունիսի. Սինօղը ի նկատի ունելով Թիֆլիզու Կոնսիստորիայի № 1135 ի 27^ն տարւոյս յայտարարութիւնը, որով յայտնվումէ հետեւեալ ճիշդագորութեամբ կատարուած պատկը. —